

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ  
ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Ք. Գավառ

09.08.2012թ.

Նախագահում էր մարզպետ Ռ. Գրիգորյանը, մասնակցում էր մարզի խորհրդի 92 անդամներից 82-ը:

Մասնակցում էին մարզպետի տեղակալներ Ա. Հակոբյանը, Գ. Ստեփանյանը, մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Խլղաթյանը, մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետեր, բաժինների վարիչներ, իրավապահ մարմինների ներկայացուցիչներ:

**Օրակարգում՝**

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրների և առաջնահերթ անելիքների մասին:

/Զեկ. Ռ. Գրիգորյան – մարզպետ/

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի մասին:

/Զեկ. Ա. Սահակյան – մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ - տնտեսական զարգացման վարչության պետ/

3. Այլ հարցեր

Արտահայտվեցին՝

Ի. Ասատրյանը - մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ

Վ. Հովհաննիսյանը - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

Մարզխորհրդի աշխատանքներն ամփոփեց մարզպետ Ռ. Գրիգորյանը:

1. Մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ի.Ասատրյանին և ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ա.Սահակյանին՝ ամենօրյա հետևողական աշխատանքներ տանել մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը բարձրացնելու ուղղությամբ:

2. Մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Դ. Հովհաննիսյանին՝ մարզի համայնքների ղեկավարների հետ քննարկել

ինքնակամ շինարարությունների, դրանց օրինականացման, հանրապետական ավտոմայրուղիներին հարող հատվածներում քաղաքաշինական գործունեության սահմանված կարգի խախտումների բացառման, շինարարության բնագավառում բյուջետային հատկացումների և քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին առնչվող հարցերը: Անհրաժեշտության դեպքում ձեռնարկել միջոցներ ինքնակամ շինարարությունների կանխման և կասեցման ու դրանց հետևանքների վերացման ուղղությամբ:

3. Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Գ. Բադալյանին՝ մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների 2012-2013 ուստարվա նախապատրաստական աշխատանքները և ընթացիկ գործունեությունը առավել վերահսկելի դարձնելու նպատակով ուստարվա ընթացքում պարբերաբար կազմակերպել շրջայցեր մարզի պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ և ներկայացնել տեղեկատվություն:

4. Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Վ. Հովհաննիսյանին՝ եռօրյա ժամկետում ճշտել մարզի համայնքներում անհրաժեշտ աշնանացան ցորենի սերմի, դիզելային վառելանյութի, ազոտական պարարտանյութի և 2013 թվականի գարնանը անհրաժեշտ դիզելային վառելանյութի և գարու սերմի պահանջը՝ ըստ գյուղատնտեսության նախարարության ձևաչափի:

5. Մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի վարիչ Է. Ստեփանյանին՝ գործնական աջակցություն ցուցաբերել մարզի համայնքներին 2011 թվականի հուլիսից – 2012 թվականի հուլիս ընկած ժամանակահատվածի հողային հաշվեկշիռների կազմման հարցում, ընդունել ճշտված հաշվեկշիռները և ամփոփել: Սահմանված ժամկետում մարզի հողային հաշվեկշիռը ներկայացնել մարզպետի հաստատմանը:

Ուժեղացնել վերահսկողությունը մարզի համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական հողերի օգտագործման նկատմամբ:

6. Մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ Վ. Մնացականյանին՝ կազմակերպել քննարկումներ մարզի համայնքների կողմից համայնքների սոցիալ տնտեսական զարգացման քառամյա ծրագրերում ներառված հիմնախնդիրների լուծման հետ կապված:

7. Մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ Հ. Շահբազյանին՝ ուշադրության կենտրոնում պահել մարզի համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված որոշումները ժամանակին մարզպետարանի ինտերնետային կայքում տեղադրելու գործընթացը: